

զօթընդհուպ շարք մը՝ ութը կ'ըջնու մէջ, և ապա ինծի մը դիզատումներ, որոնք կը գրաւեն հատորին միացած էջերը 225էն մինչև 254:

Այս զնդատումներուն կը յաջորդէ Մի-նտս զգիրի մը՝ որ ք ե ի յերկրէն Ակնոյ ք՝ գրած հանելուկները, տնթուական ու ան-համ ոտանաւորներ, որոնք բժշկականու-թեան հետ որ և է առընչութիւն մը բնաւ չեն ներկայացներ:

Է.

ԱՆԳԻՏԻ ԱՆՊԷՏ

1363 թիւ կը կրէ Զեռագիրս, որ Ա-միրտովմի գործն է դարձեալ, նման 255-ը թուահամարը կրողին, բայց զուրկ ասոր պարունակած Ստաշարանէն ու Յիշատակարաններէն:

Կաշեկազմ և ամենալաւ հանգամանքով պահուած հատոր մ'է. մեծութիւնը 23,5 հր. մեզր, լայնութիւնը 15 հր. մեզր, իսկ թանձրութիւնը 4 հր. մեզր: Ունի 448 էջ գրութիւն 224 թերթ. բամբակեայ թուղ-թով, գիրը միասիւն է, նոտք, մանրիկ, ընթեռնելի, բայց տեղ տեղ թուրքերէնով խառն. գլուխներուն սկիզբը կան զար-դագրեր՝ ո՛չ այնչափ գեղեցիկ:

Յայտնի չէ՝ ո՛ր և ո՛րք և որո՞ւ ձեռքով ընդօրինակուած ըլլալը. բայց ամէն պա-րագայի՝ 17-18-րդ դարու ծնունդ կարելի է զայն համարել:

Իմ նախագրած Անգիտաց Անպետէն աւելի ընդարձակութիւններ ունի այս ձե-ռագիրը գանազան գլուխներու մէջ, այն-պէս որ կրնանք ըսել, թէ մէկին պակասը այս միւսով լրացնել կարելի պիտի ըլլայ, եթէ օր մը զայն տպագրելու գաղափարը յանկարծ ունենանք երբեք:

ՏԻՊՔ. ՎԱՐԱՄ Յ. ԹՈՐՈՍԻԱՆ

Վեհտիկ — Մ. Վազար

Ձ) Գեղտիկի 1922

(Շարունակելի)

ԿՈՒՑԻՆԱՎԱՑ ՏԱՂԱՍԱՑՆԵՐ

..

(Շար. տես Ողմ. 1923. էջ 170)

Տաճարին շինութիւնը աւարտած՝ օ-ծուած՝ կը կատարուի, զոր աւելի նկարէն տողերով կը գծէ Տ. Յարութիւն, հուսկ մաղթանքներ բարոյելով անոր. —

Անքնին է խորք արարչին.
Գիր քան զբնութիւնս ներգործին.
Ար ի հողոյ լուծեալ զմարմին.
Էինէ փառօք զարմանալին:

Սա տարացոյց այսմ իրին.
Մերկ հատիկ սերմն ի ցատին.
Երբ յերկիր անկեալ մեռանին.
Արգասեօք քաղմօք բուսանին:

Այլ և բարբառ կենարարին.
Արգահատեաց զիւր սիրելին.
Չորեքօրեայ մնեալ զգին.
Վհրաբերեաց կեռօք կրկին:

Նոյնպէս և մերս եկեղեցին.
Իրք գմեռեալ անկեալ զգետին.
Ար զօրութիւնս աստուածային,
Սա կանգնեցաւ վերա ոտին:

Որպէս հնում տաճարին.
Համահանդոյն և սա նմին.
Ար սկզբան անշուք մթին.
Վերջին փառօք զնա տեսին:

Մեծ խնդութիւն եղև նոցին.
Արք պիտեցին այսմ աստին.
Գոհութեամբ զաստուած օրհնէին.
Ձի ցնծութեամբ յօրն այն հասին:

Հրաւիրակք առաքեցին:
Ար շուրջ զմեօք քաղաք էին.
Բազում մարդիկ ժողովեցին.
Նաւակատիւս սուրբ տաճարին:

Իսկ ի աւուր կերակէին.
Մեռել ի մէջ յեկեղեցին.
Բարձրագոյն ձայնիւ պաշտէին.
Ձոր ինչ գրեալն էր ցուցակին:

Ջսուրք սեղանսն կանգնեցին.
Այնման զինման պատարագին.
Որհնեալ իւզովն օծեցին.
Ուրոյն ուրոյն անուն հղին:

Այազ խորանն աստուածածին.
Հերսի տաճարն նոյն իսկ էին
Հարաւային անուն փրկչին.
Հիւսիսային կարապետին:

Բազում պիտոյց պատրաստեցին.
Ջինմուտք խոյոց զուարակին.
Միծանանգէս տուն արարին.
Ի փառս ամէնօրհնեալ կուսին:

Եւ ի լրման ութ օրէին.
Ջպաշտամուն կատարեցին.
Ապա զժողովն արձակեցին.
Պիտալ իւրաքանչիւր անդին:

Իսկ կատարիչ այս խորհրդին.
Էր մարտիրոս քօթահանցին.
Սա աշակերտ գոյով վեհին.
Ջէյթունցի կարապետին:

Եւ նա ի սոյն ժամանակին,
Կոտտանդինուպօլիս էին.
Անդ ձեռնագրեալ պատուով եկին.
Կաթուղիկոս հայոց ազգին:

Եպիսկոպոսական կարգն վերին.
Շնորհեալ իւրոյ աշակերտին.
Յղեաց զնա իւր քաղաքին.
Օրհնել զնոր զեկեղեցին:

Իսկ Քահանայքս այս տաճարին.
Որք յարածամ սպասաւոր էին.
Տէր ազօր էր խիստ ծերունին.
Տէր յօհաննէս քնկեր սորին:

Տէր ստեփանն զմիւս դասին.
Տէր Յարութիւն հուսկ յստին.
Որոյ ձեռամբ գծագրեցին.
Յիշատակարան այս մատենին:

Վերակացուք իշխան սորին.
Եւ այլք պէս պէս վաստակեցին,
Իւրաքանչիւր իւրում կարգին,
Յառաջակայն գրեցցին:

Մաղթեմք վասն այս յեկեղեցի.
Որոյ անունն անուածածնի,

Վերա հիմա անշարժ լինի.
Մինչ ի գալուստն քրիստոսի:

Ջայն պաշտամանց մի սպասեցի.
Կանդիզք որ միշտ վառ լիցի,
Անուշահոտ խունկ բուրհոցի.
Ի սմա ի տուէ և զիշերի:

Այազ խորան սուրբ զժոյռի,
Դրկարան անմահ փեսայի.
Սուրբ սեղան վէմ ողջակիցի.
Պատարագ անուպկաս լիցի:

Դուռն յարածամ մի փակեցի,
Ահտարան միշտ կարգաւորի.
Պատահարաց անփորձ լիցի.
Մինչև ի կատարած աշխարհի:

Եւ ժողովուրդս այս տաճարի.
Այցալ ներկայ և ապաւնի,
Ինդանեացն մեղք քուսեցի,
Կնշեցելոց հանգիստ տացի:

Յորժամ հեղեցի հարսնացի.
Այնման փեսային միացի.
Երրորդութիւն փառատեցի,
Յարաձգական յաւիտեհի ամէն:

*
* *

ԺԻ՛. Դիւրու առաջին քառորդին պատ-
կանող վերոյիշեալ երկու երէցներէն մինչև
ԺԺ - ին կէտը՝ ծանօթ տաղասաց մը շինք
զանեք կուտինահայտեթեան մէջ. բայց այս
վերջին շրջանին ան ունեցեք է արդէն
զուսան՝ Առաջնորդ մը «ԺՈՒՄԱՅ ՎԱՊԻԱ-
ՊԵՏ՝ ԲԵՆԻ Կ. ՊՈՒՍՆԱՅ»: Խննդեան թուա-
կանը ծանօթ չէ, բայց 1841 թուականին
Առաջնորդ եղած է կուտինայի, պատահած
ենք իր երգերէն մէկուն, որ իր օրով շի-
նուած կուտինայի Ս. Լժմիածին անուն
վարժարանի համար զրած է թագազար-
դեալ յարի գիտութեան հանդէս սկզբնաւո-
րութեամբ: Թուամայ վարդապետ վախճա-
նած է 1847ին Պիլէնիկի մէջ. Այս երգիչ
վարդապետին համար Դեր. Տ. Միւրաիչ
վրդ. Աղաւունի թէն մարաշցի ըսած է,
(Տճն 1900 Ռիդակն 25), բայց ըստ մեզ

մարաշցի ըլլալը խնդրական է⁽¹⁾։ Թոմաս վրդ. ունեցած է ողջամիտ ու շինարար Առաջնորդութիւն մը. ինք է որ վերոյիշեալ վարժարանէն զատ կառուցած է Կուտինա-յի նախկին Առաջնորդարանը, թափշնա-լըյի և Զալկարայի եկեղեցիները ու Աֆ. Գարահիսարի գերեզմանատան որմերը, մեծ հոգ տանելով նաև դաստիարակութեան գործին։

*
* *

Դարձեալ նոյն շրջանին ժողովրդական խոնարհ խաւէն ծագում առած է տա-ղերգունբու ցեղ մը, որուն նախահայրը վերմակագործ Յովսէփ, 180 տարի առաջ, ԺԸ. դարու կէսին՝ զաղթած է Տաղաքէն։ Անոր որդին եղած է Յարութիւն, ասոր ալ Փրիգոր. իսկ առ ունեցած է չորս զաւակ՝ Յովսէփ, Կարապետ, Ստեփան, Յարութիւն. առաջինը՝ Կիւլաճի անունով, և երրորդը եղած են աշուղներ. ասոնցմէ՝

ԱՇՈՒԼ ԿԻԻԼՃԱՆԻ (Յովսէփ) ծնած է 1834 ին. Քսան տարի, 1854 - 1874, տաւիղով (սազ) երգած է Այստընի, Տէ-միրճիի, Կէօրտեսի, Էսփիշէի, Գարա-հիսարի ու Կուտինայի մէջ։ 1874ին ամուսնանալով մինչև իր մահը՝ 1894ին նուիրուած է ընտանիքին, ցանցառօրէն միայն ձեռք առնելով քնարը։ Իր տաղերը նիւթ ունեցած են սէրը, կրօնքը, հոգե-կան յղագրեր, վարչական բռնութիւնները, չքաւորութիւնը և ուրիշ պատահական զէպքերը։ Իր օրով Ս. Աստուածածին եկեղեցիէն զողովիւն մը կատարուած ըլ-լալով՝ զայն ողբերգած է նշանաւոր տա-

ղով մը։ Սովորութեան համեմատ ճակա-տած է երեք ուրիշ աշուղներու՝ Եէքսա-նիի, ⁽²⁾ փէսէնտիի ու Քիսմիլիի հետ ու միշտ յաղթող հանդիսացած։ Լուծած է աշուղական առեղծուած մը եկեղեցական զանգակատունի վրայ։

ԱՏԵՓԱՆ. — Վերինին եղբայրը, ոչ ա-նոր չափ հռչակուած. արդէն իր կեանքի վերջին տարիներուն, 1905 - 1910, մի-այն երգած է, ընդհանրապէս սիրոյ և աշխարհի ունայնութեան վրայ։

ԱՇՈՒԼ ԾԻՆԱՍԻ (Փրիգոր Տուգազեան). — Որդի վերոյիշեալ համբաւաւոր Կիւլ-շանիին, ծնած 1877ին և 17էն մինչև 26 տարեկանը տունեւրու մէջ միայն տա-ղերգած է ազատութեան, սիրոյ ու պան-դըխտութեան վրայ։ Վերջէն ամուսնացած՝ կօշկակարութիւնով կը զբաղէր, զուա-րճարան էր ու քաջ լուրորդ մը։ Իր տունին վրայ այս ծանօթութիւնները քաղած եմ իրմէ. բայց 1915 - 18 եղեռնի տարի-ներուն, Աֆ. Գարահիսարի մէջ. — ուր փոխադրուած էր իր արհեստը գործ դնելու — մեռած ըլլալով՝ վերջէն անկարելի դար-ձած է ինծի ձեռք բերել այն տաղերը, զորս թրթռացուցած է իր ցեղը։ Բարեկամ մը միայն տուած է քաջական եռատող մը Շիկուսիկէ. —

Իզմիրտէն չըզտմ, էնտիմ Ուշագա,
Տոնու տա սաթտմ սըրա կէլտի գուշագա.
Քրիօ Նեթո տա տէր Աշքե Շիկուսի։

Իմաստասիրական եռատող մըն ալ Կիւլ-շանիկէ. —

Նէֆսինէ սապր էթ, գանա'աթ փէհլիվանլըզ տըր.
Տիւկեանըն ոահմինի ֆէթր իթմէմէք փեք զաֆի-

լանլըզ տըր.
Օրատաթի էօթէր պալդուշար, ախըրը վիրանլըզ տըր։

*
* *

Այս ցեղէն դուրս Կուտինայի մէջ գո-յութիւն ունեցած է աննշան աշուղ մըն ալ, հայ - կաթողիկէ Կարապետ Թէլլա-

(1). Տըգաս Եպ. Պաւան, « Բիւրակ » 1900, Թիւ 46, էջ 717.

(2). Այս Եէքսանին ալ հայ մըն է, ծնած Վան, բայց պարագաներու բերումով Թրքացած։ Իր այս հանգամանքը առիթ տուած է Սալիհ Ջէքի անուն թուրք գրողին որ անոր անմասնութիւնը ընդգծէ անորոշ եղանակով մը, անկէ հրատարակելով երկառոցակներու 7 տուն մը (Երբեք, Բ. տարի, 1922, Բ. 35, էջ 141)։ Այդ երգը որ շատ էսպիլ կտոր մըն է, պիտի տրամադրէ Բազ-մափէպին, եթէ քիչ մը մերկապարանոց ըլլալով։

լեան: Կան նաև բազմաթիւ թրքական խաղիւր և զրոյցներ, որոնց թէ՛ բառերուն և թէ՛ եղանակներուն հնարիչները եղած են հայեր, սակայն անոնք ճանչցուած են իբրև թրքական հեղինակութիւններ:

ԱՌՆԱԿ

ՀԱՍԱՐՈ (ԲԱՍՏՈՍ) 1923

ՍՊԱՅԱՆԻ ԶԱՆՐԱՄԱՆԱԼ ԳԱԿԱՂԸ

(Աշխարհիկ — Պարսկական Խառնուրդներ)

(Շարունակութիւն տես Բազմ. էջ 206)

Բուսականութիւնը. — Չհարմարաւ շատ հարուստ է բուսականութեամբ, որին նպաստում է զաւառի արգասաբեր հողը և բարեբեր կլիման: Ամբողջ զաւառը ծածկւած է արգաւանդ դաշտերով ու հովիտներով, խոտաւէտ արօտներով ու շամբերով, սիրուն տափաստաններով, կանաչ մարգագետիններով, պտտաններով ու պարտէզներով (խրաքանչիւր գիւղ ունի իր պտտանն ու պարտէզը), որոնք գլխաւորապէս զարնան ծածկւում են բազմամտեակ բոյսերով ու խոտերով և նպաստում են անասնապահութեան ու խաշնաբածութեան: Իսկ ընդարձակ արօտերն ու լինաղաշտերը առանձնապէս նպաստում են երկրագործութեան: Այստեղ բուսում են թէ՛ ցորտ, թէ՛ բարեխառն և թէ՛ ջերմ երկիրների յատուկ հացահատիկներն և արդիւնաբերական բոյսերը:

Հացաբոյսերն ու խոտաբոյսերը. — Արտերում մշակում են հետեւեալ ընտիր հացաբոյսերն ու արդիւնաբերական բոյսերը, — ցորեն, գարի, հաճար, կորեկ, կտահատ (որից ձէթ են պատրաստում), չաւաղտ, հօլլաթ, եօնջա (մի տարի ցանում են և եօթը տարի հնձում), նուշի (ղառագորտ), քիսին (կէփտանա), սոպ, սիսեռ, խաշիաշ, շանբիւա, քաթիճ (որից ձէթ են պատրաստում), բրինձ, և այլն:

Մրգերն ու կանանկեղենները. — Բանջարանոցներում, բերքում և պարտէզներում (բաղջաներում) ցանում են վարունգ, շանբուր, քալ (սեխ), ձմերուկ, դդում, զազար, կաղամբ, բոզկ, տակ (ճակնդեղ), լոբի, բակլայ, մաշ, բազրիշան, գետնախնձոր, (աննշան քանակութեամբ) սոխ,

թրեֆ, սամիթ, շաղգամ, զոռատ (եգիպտացորեն), արևածաղիկ, ջրկոտեմ, կոտեմ, սուսամբար (զամբակ), ռեհան, անանուխ, թախուն (թարխուն) փշինդ, և այլն:

Դաշտային բուսականութիւնը (խրեմարոյս). — Դաշտային բուսականութիւնը ճոխ է և բազմազան: Դաշտերում բնում են սինձ (որից աղցան են պատրաստում, ապա իւղով և կաթով տապակում և ուտում), սիբեխ (աղցան են պատրաստում), դաղձ (հաց ու պանիրով ուտում են), բազուկ (անհաց ուտում են), քանգ, թթլաշ (իբրև թեր գցում են թանապուրի մէջ), խօզ, նասոլ (մարգագետինների միջից են գտնում, որը աղցան են շինում, ապա կաթով, իւղով և ձուով տապակում են և ուտում), բլբլաբուխ (սրա արմատը, որ կոչւում է առօլ, անհաց ուտում են, իսկ տերևներից աղցան են պատրաստում), բանջար, ճերմակ բանջար (աղցան են պատրաստում), խոուկ (աղցան են պատրաստում), բաքալուք (հացով ուտում են), պօղղ (արմատն ուտում են), դիաղ, կապոյտ եօնջա, դեղին եօնջա, դառնիշ, խրինդուք, ճիլ (որից պարան են պատրաստում), ճարճատուք, թախայ, դառնաիլ, եղաիլ, քօնակ, կաթնուկ, ջագնան, շիլ խոտ, սիրիկ, փաթթաթուկ, փիզօ, դաշնադառնիշ, նարմալ, կօզդան, մկան քարի, եզգան լեզու, իծու միրունք, ուլի յանգաշ, իշու փուշ, սև փուշ, զաբօռ, քօզայ, սէզ, զօմբուռ, բարթանք, բիան, հօռ, ճնճաբլիթ (որից հազի համար դեղ են պատրաստում), խաքըշի (տաքութեան համար դեղ են շինում), ուռց (սովորացաւի դեղ են շինում), շիրալի, չալմայ, գինիուն, դաթարան, քաթիշաք, բուխայ (որից կալի համար աւել են պատրաստում կամ իբրև վառելիք թոնրում գործածում), թօզէյան (կրի հետ խառնում են և ծեփում բազիսի պատերը), և այլն:

Լեռնային բուսականութիւնը. — Չհարմարաւ հալի լեռնային բուսականութիւնը նոյնպէս բազմազան է: Լեռներում բնում են հետեւեալ բոյսերը. — մուսիլ (որ մածունի հետ խառնելով ուտում են). սրան գիւղացիները կոչում են թիլ (լիքայ), օրայ (որի կեղևը կնկպում են և ուտում), քանգառ (աղցան են պատրաստում և թանի հետ խառնում կամ իւղով տապակում են և ուտում), սունկ (իւղով տապակում են և ուտում), քալալով (աղցան են պատրաստում), պոսս (հացով ուտում են կամ ապուրի մէջ ածում), լօլօք (անհաց ուտում են), թուլ, խաւոծիլ (ծածում են և թթլաշ ջուրը ծծում), բօնբօրի (աղցան են պատրաստում), գուլուֆիլ